

4-3727



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«30» 04 2026թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 055 - 26

Նախաձեռնող՝

«ԲՈՂՈՅԱՆ» ՍՊԸ

Լոռու մարզ, Մեծավան, 00/Շ

Գործունեությունը՝

Ջերմոցների կառուցում

Լոռու մարզ, Տաշիր համայնք, Տաշիր բնակավայր, Երևանյան փողոց 6/4

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 055 - 26

«30» սեպտեմբեր 2026թ.

Տաշիր բնակավայրի Երևանյան 6/4 հասցեում նախատեսվող ջերմոցների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԲՈՂՈՅԱՆ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Լոռու մարզ, Տաշիր համայնք, Տաշիր բնակավայր

Ներածական մաս. Լոռու մարզի Տաշիր համայնքի Երևանյան փողոցի 6/4 հասցեում նախատեսվում է իրականացնել ջերմոցների կառուցման աշխատանքներ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի ա. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N26082025-06-0065 վկայականը, Լոռու մարզի Տաշիր համայնքի կողմից 2025թ. հոկտեմբերի 20-ին տրված NՆԹ-9452-25 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Հողամասի կադաստրային ծածկագիրն է՝ 06-008-0001-0024, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Լոռու մարզի Տաշիր համայնքի Երևանյան փողոց 6/4 հասցեում, իրենից ներկայացնում է կառուցապատումից ազատ հողամաս՝ 1.02766 հա մակերեսով:

Գործունեության տարածքում առկա գազատարից նախատեսվող ջերմոցների ամենամոտ հեռավորությունը կազմում է 32.5 մ, գազալցակայանից՝ 46.9 մ, ամենամոտ բնակելի տնից՝ 113.1-113.6 մ:

Տարածքի երկրաբանական կառուցվածքը շատ պարզ է, այստեղ զարգացած են միայն վերին պլիոցենի բազալտը, հրաբխային ավազները և ժամանակակից գրավորությունները:

Համաձայն գնահատման հաշվետվության ֆիզիկատերկրաբանական պայմանի վտանգավոր երևույթներ, ինչպիսիք են՝ կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և



այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ նախատեսվող կառույցների վրա բացակայում են, ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Գործունեության տարածքում իրականացված տեսողական դիտարկման և գննության, արդյունքների համաձայն տարածքում առկա չեն հնագիտական կամ պատմական հուշարձաններ: Տարածքում բնության և պատմամշակույթային հուշարձաններ չկան: Ծառաթուփային բուսականությունը բացակայում է:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ ջերմոցների կառուցման տարածքում չկան Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ, իսկ շինարարության ընթացքում դրանց հանդիպելու դեպքում նախատեսվում է պահպանությանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք նկարագրված են գնահատման հաշվետվությունում:

Նախատեսվում է իրականացնել ժամանակակից լուծումներով երկու ջերմոցի կառուցում և շահագործում՝ գյուղատնտեսական արտադրանքի (բանջարեղեն, կանաչիներ և այլ մշակաբույսեր) ստացման նպատակով:

Ջերմոցների կառուցման տեխնիկատնտեսական ցուցանիշներն հետևյալն են՝

1. հողամասի ընդհանուր մակերես՝ 10.276.6 քմ,
2. ջերմոցների ընդհանուր մակերես՝ 7365 քմ,
 - ջերմոց №1՝ 5610 քմ,
 - ջերմոց №2՝ 1755 քմ,

3. այլ տարածքներ՝ գարնանային/ձմեռային կանաչապատում (ծառեր, թփեր, մարգագետին), անձրևաջրի և ջրամբարների համար տարածքներ, այլ մակերևութային ենթակառուցվածքներ (փոքր ճանապարհներ, լույսի հենարաններ)՝ 2911.6 քմ:

Ջերմոցները նախատեսվում են իրականացնել մետաղական կամ հողմակայուն թեթև կոնստրուկցիաներով՝ ծածկված բարձրորակ երկշերտ պոլիէթիլենային թաղանթով: Ծածկը կունենա՝ բարձր լուսաթափանցություն, ջերմամեկուսացման բարձր ցուցանիշ, ուլտրամանուշակագույն ճառագայթումից պաշտպանություն, մեխանիկական ամրություն և դիմադրողականություն քամու և տեղումների նկատմամբ: Կառուցվածքները կհամապատասխանեն ժամանակակից էներգաարդյունավետության և աշխատանքի անվտանգության պահանջներին:

Ջերմոցները կունենան ժամանակակից ինժեներական համակարգեր որոնք են՝

- ջեռուցման համակարգ, որը կապահովի օպտիմալ ջերմաստիճան բույսերի աճի համար,
- օդափոխման և խոնավության կարգավորման համակարգ, որը կնպաստի միկրոկլիմայի պահպանմանը,
- ոռոգման համակարգ՝ կաթիլային կամ ավտոմատ կառավարվող եղանակով,
- լուսավորության համակարգ՝ անհրաժեշտության դեպքում լրացուցիչ լուսային ռեժիմ ապահովելու համար,
- կլիմայի վերահսկման ավտոմատ համակարգ, որը թույլ կտա մշտապես վերահսկել ջերմաստիճանը, խոնավությունը և լուսավորությունը:

Նախատեսվող բոլոր ինժեներական համակարգերի լուծումների և արդյունավետության վերաբերյալ տեղեկատվությունն առավել մանրամասն նկարագրված է գնահատման հաշվետվությունում:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ տեխնիկական սրահների, տնակավորման սրահների և սպասարկման սրահների կառուցում չի նախատեսվում: Բոլոր աշխատանքներն իրականացվելու են ջերմոցների ներսում առկա տարածքներում:



Նախատեսվում է գյուղատնտեսական արտադրանքի մշակաբույսերի մշակում ժամանակակից կաթիլային ոռոգման համակարգի կիրառմամբ: Կաթիլային համակարգը կապահովի ջրի արդյունավետ օգտագործում (մինչև 90-95%), քանի որ ջուրը կմատակարարվի անմիջապես բույսերի արմատային գոտի՝ նվազեցնելով գոլորշիացման և մակերեսային հոսքի կորուստները:

Ջերմոցների շահագործման փուլում օրական ջրի պահանջարկը միջինում կկազմի 30-35 խմ, իսկ առավելագույն բեռնվածության դեպքում՝ մինչև 55-60 խմ:

Ոռոգման ժամանակավոր փուլում նախատեսվում է տարածքում տեղադրել 10 տոննա տարողությամբ երկու ջրի բաքեր, որոնք կծառայեն որպես օրվա գործառնական ջրի պահուստ՝ ջերմոցների կաթիլային ոռոգման համակարգի աշխատանքն ապահովելու համար: Ջրի մատակարարումը կիրականացվի ցիստեռն-ավտոմեքենաների միջոցով: Բաքերը կլցվեն ըստ պահանջարկի՝ հաշվի առնելով ջերմոցների շահագործման տվյալ ժամանակահատվածի ոռոգման ծավալները, ջուրը բաքերում կուտակվի միայն անհրաժեշտ քանակությունը՝ բացառելով ավելցուկային լցումը, ավելցուկային ջրի առաջացում և հեռացման անհրաժեշտություն չի նախատեսվում:

Նախատեսվող լուծումը կրում է ժամանակավոր բնույթ և կգործի մինչև նախագծով սահմանված մշտական ջրագծի կառուցումն ու շահագործման հանձնումը: Մշտական ջրամատակարարման համակարգի գործարկումից հետո ջրի տեղափոխումը ցիստեռններով կդադարեցվի, և ջերմոցների ոռոգումը կիրականացվի նախագծային ինժեներական ենթակառուցվածքների միջոցով:

Նախատեսվում է երկու պահեստներ՝ պարարտանյութերի պահեստավորման համար:

Նախատեսվող ջերմոցների ծածկի և պատերի համար կկիրառվի բազմաշերտ պոլիէթիլենային համակարգեր՝ ցածր ջերմաթափանցելիությամբ, ինչը թույլ կտա պահպանել ներսի ջերմաստիճանը և նվազեցնել ջեռուցման էներգիայի պահանջարկը, կկիրառվեն ջերմաարդյունավետ և խոնավադիմացկուն մեկուսիչ նյութեր, որոնք կնվազեցնեն ջերմային հոսքերը և կբարձրացնեն ընդհանուր էներգախնայողությունը:

Ջերմոցներում նախատեսվում է օգտագործել բնական գազով աշխատող տաքացուցիչների համակարգ, որը կծառայի որպես հիմնական ջեռուցման աղբյուր:

Ջերմոցային տնտեսության ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել կառուցվող արտաքին ջրագծին միացման միջոցով, ջեռուցման նպատակով գազամատակարարումը նախատեսվում է միացում միջին ճնշման գազատարին, գազամատակարարումը կիրականացվի գործող նորմատիվատեխնիկական պահանջներին համապատասխան՝ նախատեսելով կարգավորիչ-չափիչ հանգույցներ և անվտանգության սարքավորումներ, տարածքի էլեկտրամատակարարումը կիրականացվի ընկերությանը պատկանող էլեկտրական ենթակայանից:

Ջերմոցների կառուցման աշխատանքների ընթացքում ծանր կամ խորքային շինարարական աշխատանքներ չեն նախատեսվում, ջերմոցային կառույցները կրող սյուները կտեղադրվեն մոտ 1-1.5 մ խորությամբ: Նախատեսվող աշխատանքների ընթացքում կհանվի մոտ 243 մ³ հողային զանգված, ինչը կօգտագործվի ջերմոցների կառուցվածքային և կայունության ապահովման նպատակով, հողի բերրի շերտը կպահպանվի և կօգտագործվի ջերմոցների շուրջ բակային կանաչապատման և բարեկարգման համար: Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

Աշխատակիցների և ժամանակավոր պահեստային տարածքների կենցաղային ջուրն ու կեղտաջուրը կհավաքվեն կոյուղային համակարգերով կամ ժամանակավոր կոյուղագծային



տարաներով, որոնց բեռնաթափումը կկատարվի տեղական ինքնակառավարման մարմնի կողմից՝ թույլատրելի վայրերում:

Նախատեսվող աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունները հիմնականում կապված կլինեն փորման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ: Աշխատանքների իրականացման ընթացքում հիմնական ռիսկերը կապված կլինեն հիմքերի փորման ընթացքում փոշու, շահագործման ժամանակ շինարարական տեխնիկայի վառելիքի արտանետումների (CO, NOx) հետ:

Քանի որ շինարարական աշխատանքները կկրեն ժամանակավոր և սահմանափակ բնույթ (հողային աշխատանքներ, բետոնային հիմքերի իրականացում, մոնտաժային աշխատանքներ) փոշու առաջացումը կլինի տեղային և կարճաժամկետ: Շաղախը և բետոնը կառաքվեն Տաշիր բնակավայրի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:


Շինարարական նյութերից օգտագործվելու են ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, կոպտատաշ քարե շար, պոլիէթիլեն և այլն, բնառեսուրսներից միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման, շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար:

Շինարարության կազմակերպման և շինարարական աշխատանքների ժամանակ նախատեսվում են շրջակա միջավայրի բաղադրիչների պահպանության համար բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնցից են՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում ջրցանի իրականացում, շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորման իրականացում,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) փակ ծածկով մեքենաներով տեղափոխում, սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով,
- ավազի, ցեմենտի, գաջի, խիճի, այլ սորուն նյութերի, հողային զանգվածների, ինչպես նաև շինարարական աղբի պահեստավորում փակ տարածքներում կամ ծածկում անթափանց թաղանթներով,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերի ուղղորդում պարզարան, մեխանիկական նստեցում, պարզեցված ջրի օգտագործում տարածքի ջրցանման համար, փոքր քանակներով նստվածքի հեռացում որպես շինաղբ,
- ջրցանի ծավալների այնպիսի հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և ջուրը կբավականացնի միայն փոշենստեցման համար և այլն:

Շինարարական մեքենաների և փոխադրամիջոցների տեխնիկական սպասարկումն ու վառելիքի լիցքավորումը կիրականացվեն շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված սպասարկման կետերում: Շինհրապարակում վառելիքի և քսայուղերի պահեստավորում չի նախատեսվում:

Գնահատման հաշվետվության համաձայն՝ շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակների (հրդեհի առաջացում, հեղուկ նյութերի արտահոսք, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն), այդ թվում նաև աղմուկի և թրթռումների հնարավոր ազդեցության բացառման, նվազեցման, համար ևս նախատեսվում են մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք նկարագրված են գնահատման հաշվետվության համապատասխան բաժիններում:




Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող հիմնական թափոնատեսակը հանդիսանալով շինարարական աղբը, ինչը ամբողջությամբ կտեղափոխվի տեղական ընթանակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը և՛ շինարարության, և՛ շահագործման փուլում կտեղափոխվի մոտակա աղբավայր՝ Տաշիր բնակավայրը սպասարկող ընկերության կողմից: Գործունեության իրականացման ընթացքում առաջացող թափոնները կլինեն կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի), փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հողը, լաբաներկանյութերի այլ թափոնները, կարծրացված սոսնձի, կտորների տեսքով սև մետաղներ պարունակող թափոնները, օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալարերը տարբեր պարունակության, օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված այլումինե հաղորդալարերը: Համաձայն գնահատման հաշվետվության առաջացող բոլոր թափոնները կհավաքվեն տեսակավորված, ժամանակավոր կպահեստավորվեն առանձնացված հատվածում և պայմանագրային հիմունքներով կհանձնվեն համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին կամ կտեղափոխվեն համայնքային թափոնների տեղակայման վայրեր:

Քանի որ ջերմոցները նախատեսվում են օգտագործել բանջարեղենային մշակաբույսերի աճեցման համար, գործունեության ընթացքում հնարավոր է առաջանան բուսական ծազման թափոններ՝ կապված ինչպես աճեցման գործընթացի ընթացքում (վնասված կամ հիվանդ բույսեր), այնպես էլ բերքահավաքից հետո (փչացած կամ շուկայական պահանջներին չհամապատասխանող արտադրանք): Այդ թափոնների համար նախատեսվում է իրականացնել հետևյալ բնապահպանական միջոցառումներ՝ բուսական թափոնները (փչացած բանջարեղեն, բույսերի մնացորդներ) հնարավորության դեպքում կօգտագործվեն կոմպոստացման նպատակով, ստանալով օրգանական պարարտանյութ, որը կարող է կիրառվել նույն ջերմոցային տնտեսությունում, իսկ կոմպոստացման համար ոչ պիտանի կամ ավելցուկային բուսական թափոնները կհավաքվեն և կհեռացվեն՝ փոխանցվելով համայնքային ծառայություն մատուցող կազմակերպությանը կամ համապատասխան թափոնների ընդունման վայր: Թափոնների կուտակումն ու պահեստավորումը կիրականացվի սահմանափակ ժամանակով և սանիտարահիգիենիկ պահանջների պահպանմամբ՝ կանխելով հոտերի առաջացումը, վնասատուների տարածումը և շրջակա միջավայրի աղտոտումը:

Նախատեսված բնապահպանական բոլոր միջոցառումները ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Ջերմոցների շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսված է իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները՝

1. Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:
2. Օդի դրական ջերմաստիճանի դեպքում օրվա ընթացքում շինարարական հրապարակի պարբերաբար ջրում՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով՝ հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:



4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ և այլն:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է հատկացնել 2 մլն ՀՀ դրամ:

Պարճառաքանական մաս. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հանրային ծանուցումը և լուսմներն իրականացվել են Տաշիրի համայնքապետարանի նիստերի դահլիճում:

Հանրային լուսմների ժամանակ գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Գնահատման հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Լոռու մարզպետարանից, Տաշիրի համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, որոնք հաշվի են առնվել ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումում:

Ամփոփելով գնահատման հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կլրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ: Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են փորման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադրի և շինարարական թափոնների հեռացումն ու տեղափոխումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված վայր:
3. Ջերմոցների շահագործման փուլում բուսական ծագման թափոնների հնարավոր առաջացման դեպքում նախատեսվող բնապահպանական միջոցառումներն իրականացնել գնահատման հաշվետվությամբ սահմանված կարգով:
4. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:
5. Ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:



6. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
7. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«ԲՈՂՈՅԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Լոռու մարզի Տաշիր համանքի Տաշիր քնակավայրի Երևանյան 6/4 հասցեում նախատեսվող ջերմոցների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝



Վերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Նելլի Նասիրյան